

ՈԱԶՄԻՆԿ ԴԱԿԱՆՈՅԱՆԻ ՍՏԱՆԾԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ԼԵԶԿԱՌՃԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

Մ. Ս. Սահակյան, Բ. Վ. Քոչարյան

Յուրաքանչյուր սերունդ պարտավոր է իր որոնած ու նախասիրած կենսական, գեղագիտական կամուրջը հատել յուրովի, իր տպավորություններն ընթերցողին մատուցել նոր ինտրիգներով ու թարմ պատկերներով: Այդ ուղիով մերթ համաշափ, մերթ վայրիվորումներով ձգվեց Բազմիկ Դավոյանի բանաստեղծական որոնումների աշխարհը: Գույների ինքնատիպ բանաստեղծը /19-րդ դարում Արթուր Ռեմբոն հանգամանորեն անդրադարձավ գույներին և տեղեղծեց գույների բանաստեղծական տեսությունը/ հաճախ Լ. դիմում համեմատությունների և ակամայից արդեն համեմատվողն ավելի պատկերավոր Լ. դառնում, ավելի խորն ու ռեալիստիկական է ըմբռնվում նրա սովորական հատկանիշը:

Ձյունները սպիտակ շրթունքների պես
Իշան ինձ վրա.

Ծածկեցին մարմնիս վերքերը բոլոր
Եվ ինձ պատմեցին աստղերի մասին
Եվ կրկնում էին, թե աստղեր չկան,
Իսկ ես մոլորված հիանում էի
Մուրի մեջ հանգչող

Նրանց սպիտակ թրթռումներով: [1:16]

Այստեղ համեմատությունը կրկնակի բանաստեղծական Լ. Դավոյանը ձյուններ չի համեմատում սպիտակ գույն արտահայտող ինչ-որ սովորական առարկայի հետ, այլ շրթունքների փառամանակ ստեղծելով անհարիր բառակապակցություն, որն Լ. ձյուններին հաղորդում է բազմիմաստություն. կարելի է ընկալել և՛ գեղեցիկ ձյուն, և փափուկ, և՛ պատրանքային, և՛ անցողիկ:

Համեմատությունը չնայած շատ սովորական ու տարածված ոճական միջոց է, բայց Դավոյանի գրչի տակ դառնում է պատկերավոր, թայմ ու վառ.

Եվ անցնում է այսպես պահը, ժամանակը:

Մարում է լուսինը:

Ձեռքերս դողում են թո թույլ հպումի գործությունից

Մշուշոտ տևողի մեջ վառվում են աչքերդ

Ինչպես իր ծխով բողբոջված կրակը: [2:22]

Առաջին հայացքից թվում է քառատողի երկտողների մեջ անչափվետ կա: Այգրի երկու տողերում խոսվում է հաճելի, ժամանակի երևույթներից, իսկ հաջորդներում՝ ցավի /աչքերդ վառվում են կրակի նման/, սակայն համեմատությունն այնպես է կառուցված, որ անգամ այդ ցավը գայթակղիչ է, իր ծխով բողբոջված կրակը միանգամից չի վառվում, այլ դանդաղ, հեղահալ նաև յուսավորելու նպատակով: Գեղեցիկի հակադրություն է մարմնավորում նաև հետևյալ քառատողը.

Հակատապալի դառնության միջով
Ես մարդուս անհուն ցավին եմ նայում,
Մայրամուտի պես իրահալ եմ ես
Եվ մայրամուտի նման անկայուն:
Նայում եմ. սիրտս կծկվում է ահից,
Ապա ցրվում է արահետներում,
Եվ նա, որ ձեռքս բռնել էր ամուր,

* Աստղանիշով նշված բոլոր աշխատանքները գեղուցվել են «Երիտասարդ գիտնականների II գիտաժողովում»: Մանիփոսիկներ, ամբի, 2007թ.:

Ինձ իր տրտմության ծաղիկն է բերում... [3:33]

Հակադրությունը Ռ. Դավոյանի ստեղծագործություններում ինքնաբացահայտման բանա
Լ. որով հնարավոր է դառնում բացորոշել ապրումի ու գեղարվեստի խորությունը, չափը:

Ռազմիկ Դավոյանի բանաստեղծական պատկերներում կարևորվում է անձնավորումը և
պատկերների այն տարածքն է, որտեղ գրողի գրիչն այլևս խոչընդոտ հաղթահարելու խնդիր
Այս արտահայտչամիջոցով գրված բանաստեղծություններն ավելի շատ վերլիբր են.

Նորայրը ասում էր, որ դատարկ են դու, աշխարհ,

Եվ քո փորի մեջ են խրված քո հոտերը,

Իսկ քույրը կրկնում էր, թե գիժ է եղբայրը,

Ինչպես բոլոր-բոլոր պոետները: [4:42]

Բանաստեղծական իր ըմբռնումները Մ. Մեծարենցը բանաձևում է այսպես. «Բանաստեղծ
բնության ցուցատուրը պետք է ըլլա, քերթվածները իբրև բառ պետք է ունենան տերևների թրթռումը
թռչունին դալայալը, մարդերուն գորովը, դաշտին ու լեռան մշտանուն գոյությունը: Բանաստեղծի
ծայրը տիեզերական հարաբերության մի պարը պետք է ըլլա, բոլոր գույներուն համադրական
թրթռումովը տրոփուն»: Մեծարենցյան բանաձևումը՝ տարբերվում է դավոյանականից, բայց
նույնն են բանաստեղծական ընկալումները.

Փողոցը նրա համար է,

Որ անցնեն տրամվայները՝

Իրենց կմախքազած կոնքերն օրորելով.

Եվ մերենաներն անցնեն, յիարկեն,

Նրբեմն էլ մարդկանց տրորելով

կամ՝

Ձեր կուրծքը գալիս է, մայրձեր,

Ձեր խեղճ կողերը փշրված են ու կարկատված նորից

Եվ ձեր սիրտը, որ խորն է, թաքնված

Հառաչում է, միշտ այդ անհայտ խորից

Եվ ձեր կուրծքը շատ գալիս է, մայրձեր,

Ես այդ գգում եմ... [5:8]

Ինքնատիպ ու նորրը են Ռազմիկ Դավոյանի մակդիրները: Նրանք բխում են
բանաստեղծության ընդհանուր ոգուց, հարստացնում տրամադրությունը, կատարյալ
մարմնավորում մտահղացումը. լայվարդ-լայգուր լեռներ, առապելապատ երկիր, գույնզգույն
շշուկներ, ջրասույզ երկինք, անզգաճ հուշեր, անպաճույճ լուսին, թավշե շրթունքներ, մեթ
լույություն և այլն:

Ճերմակ գիշերներ, բարի գիշերներ

Գիշերներ վշտի, կարոտի, լացի

Իսկապես մի քիչ անկ ու անգո

Իսկապես լրիվ, լրիվ կանացի: [6:20]

Ռազմիկ Դավոյանը շարունակեց հայ պոեզիայի մեջ հազարամյա պատմություն ունեցող
նմանաձայնության ավանդը: Դավոյանի պոեզիայում ալիտերացիան ինքնաբերական չէ, և
համապատասխանում է նկարագրվող երևույթի բնույթին: Օրինակ՝ վահան Տեղյանը աշուն կամ
տներապոյի նկարագրելիս կուտակում է ս.ջ.շ հնչյունները, որոնք օգնում են լսելու թավառ
տերևների ու աշնան մեղմ հոսքի ձայնը: Իսկ Դավոյանի ջ, շ, ժ հնչյունները ավելի շատ տիպական
կոյորիտ են ստեղծում, որտեղ ավելի պարզ ու բանաստեղծական են կապե կծերն ու դավկացա
շրթունքները.

Գիշերվա մեջ կծերն իրար

Ծնչում են կապե խոսքեր,

Եվ կենդանի շշուկներից

Կապե շուրթերն են դավկանում: [7:37]

Լեզվառձեական առանձնահատկություններով ու գեղարվեստական հնարքներով
հարստության յուրատիպ են նաև Ռ. Դավոյանի պոեմները, որոնց հեղինակը դիմել է
ստեղծագործական նախընթաց կյանքի գրեթե բոլոր փուլերում: Պոեմներում, լինի այն
«Ռեքվիեմ», «Լպտս պատանության», թե «Հեքիաթ մոծականյաներով», «Թորոս Ռոսլին» կամ
«Մաչեղի ջարդը», Դավոյանն ակնհայտորեն պահանջում է խոսքի բարձր
գեղարվեստականություն՝ հիմնականում ապավինելով փոխաբերություններին,
գույզահեռականությանը, բառային կրկնություններին, երաժշտականությանն ու ժխտականությանը:

Դրանց գուգահեռելով տասնյակ այլ արտահայտամիջոցներ՝ աստիճանավորում. առճայնույթ. նորաբանություն, հոնտորական հարցում: Իբրև բանաստեղծության տեսակ, պոեմը Ռ. Դավոյանը զարկելով է նոր ժամանակների գեղագիտությանը համահունչ՝ դարձնելով այն պոետական. անկաշկանդ. խորագահին ու զգացմունքային արտահայտություն: Այդ ամենը տեսանելի եղավ դեռ նրա առաջին ծավալուն առեղծագործության՝ «Ռեքվիեմի» մեջ: Բովանդակային առումով այստեղ կարծես թե նորություն չկա: Դասական պոեմների պես «Ռեքվիեմը» նույնպես արձագանքում է ժողովրդի՝ տվյալ դեպքում հայության ճակատագրական իրադարձություններին՝ բնականաբար չրջանցելով նաև մեծ եղեռնի թեման: Պոեմը սկզբից մինչև վերջ գրված է եղբորական շնչով. թեև ուրաբանչյուր հատվածում զգալի է լավատեսական հայացքի ներկայությունը: Գեղարվեստական պատումի տոնայնությունը, քիթմը, բառապաշարը և ոճական այլ տարրեր լիովին համահունչ են արձարժվող թեմային և որպես այդպիսին «Ռեքվիեմը» թախճոտ է ու տվորալի.

Ցավներն ամեն՝ առած ուսին

Գլխի վերև մեռած լուսին,

Ոտքերի տակ աշխարհը սին,

Չգիտեմ երբ, չեմ հիշում ով

Անցնում էր լուռ այս աշխարհով [8;248]

Այդպիսի հակիրճ ու դիպուկ մատնանշումից հետո հեղինակը խտացնում է խոսքի ռեբերգական տոնը.

Աչքերից կախ՝ սարսուռ երգեր

Ուներից կախ՝ թմրած ձեռքեր

Չգիտեմ երբ, չեմ հիշում ով

Հողաձնունդ իմ գավերով

Մեխվեց երկրի ամեն անկյուն

Խնդդեց բոլոր ցավերն անբուն

Ո՛վ է, Արարիչը,

Որ խնդրվելով մթից

գոռաց՝

«Նդիցի լույս...»

Եվ «լույս եղև»

Գոռաց՝

«Համակարգվիր քաոս»... [9;248]

Սակայն դաժան ժամանակների քաոսն անգամ չի կարող կասեցնել իրական երգը, որրան էլ այն եղերական շնչով տեղորոշված լինի. գրկել գեղարվեստականության հաստատող այնպիսի տարրերից՝ ինչպիսիք են երաժշտականությունն ու քիթմը, որոնք առանձին հատվածներում միանգամից են ընկալելի ու տպավորիչ:

Ի տարբերություն «Ռեքվիեմ» պոեմի՝ «Լպոս պառտանությունում» առկա է պոեմետային գիծ. կան կոնկրետ հերոսներ՝ անուններով ու ոգորումների պատմությամբ: Լպոսայնության ձգտող այդ ստեղծագործությունը զավի ու սիրո ներդաշնակ պատում է. որի գրեթե բոլոր գլուխները խոստովանության պես են հնչում՝ լինի վերջինս Հեղինակի, թե հերոսի կողմից: Խոսքի մեղմություն և խորը քնարականություն. սիա թե լեզվաոճական տեսակետից ինչպիսիք է առանձնահատուկ պոեմը:

Գեղարվեստական խոսքի ներգործությունը ուժգնանում է ոչ միայն առարկայական առանձին երևույթների մատնանշմամբ, այլև դրանց շեշտվող հանգավորմամբ /լուսին-լուսին-սին, երգեր-ձեռքեր-մեղքեր, անկյուն-անբուն/: Ծարունակելով ոճավորման այդ հնարքը՝ հեղինակը ավելի է սրում պատումի բովանդակային ու ձևային կողմերը.

Աշնան տառուկ երկիրներով

Տարավ մեռած աչքերը մեր

Մեր քրքրված, լուռ աչքերում

Կուլան ճերմակ ու պաղ ծյուներ,

Կուլան տխուր, կուլան ճերմակ

Թարթիչներին մեր ծյունակեր

Եվ մեր մեռնող սրտերի մեջ

Լիլիսն հանդարտ ծյունե ձեռքեր: [10;249-250]

Դավոյանն այստեղ ստեղծում է բառային կրկնություններ՝ նախ «կուլան» բառով, ապա «ծուն» գոյականով: Հաջորդ բառատողում «ծունը» ստանում է նոր ու հետաքրքիր նրանգավորում.

Ձյունն մարսին, ծյունն շապիկ.

Ձյունն նժույց, ծյունն թամբիկ.

Ձեր մոլեռանդ իմայրնեղով...[11:250]

Բայց ողբն ու ցավը հնարավոր չէ, և հոգեբանորեն ճշգրիտ չէ շարունակ տեղավորել կանոնի չափ ու ձևի մեջ: Ուստի դասական կառույցների անմիջական հաջորդում են քանաստեղծական ավելի ազատ, վերլիբրի հասնող պատո:մները:

Այն հերարծակ գիշեր.

Երբ այլևս գիշեր չկար.

Երբ գիշերը վերջացել էր կեսգիշերից առաջ

Երբ ուղիղ կեսգիշերին

Արշալույսն էր մի սև

Ժայթրում հողի կրծքից

Դեղին աստղերն էլ վեր.

Երբ դու փողակրե անոթ էիր

Լցված դատարկությամբ

(/Այ՛ ծովս էր/ ես ծուխ էի)

Լուծված փղոսկրով:[12:253-254]

Ռեքվիեմ պոեմում Բ. Դավոյանը հաճախ է կիրառում հարց-դիմումը, որը, կարծես, հասկանալի է ինքնին, սակայն ինքնին չափազանց վերածվել է բախտահնարի՝ հոգու բողոքը ճշմարտագիտուն արտահայտելու համար: Այդպես հեղինակը փորձում է երկխոսության մեջ մտնել, աչքերը ինչ-որ ձևով պնդել, պատասխան տան գործված մեղքի ու ոճի համար: Բայց հեղինակային դիմումները վերածվում են անպատասխան մեղախոսությունների /ընդհանրապես «Ռեքվիեմ» երկար մեղախոսություն է՝ բազում ելև.յններով ու անխնայ գնևումներով/.

Եթե մարմինդ լցված է հանգով

Եվ երակներդ ներդաշնակության ցավով են տներում.

Ուրեմն՝ ինքդ՝ Արարիչն է, քո

Հակառակը վերևից հսկում:[13:30]

Պոեմում գերիշխողը գեղարվեստական մտածումի նման որակն է: Սակայն ստեղծագործությունը ստանում է սաստկական շերտեր.

Եվ կատարյալին ձգտելով անվերջ

Իր կատարյալը հենց ինքը խեղճում

Մարդը դառնում է մոլուգթի գերին

Որ այլանդակներ ծնվեցին գնդում:[14:121]

Հատկապես խոսքի աստիճանավորման բազում օրինակներ կարելի է գտնել արձարձվող պոեմում. որոնք տեքստին հաղորդում են շեշտվածություն, հուզականություն ու արտահայտչականություն.

Այն տանջանքը, որ նա է, կրում

Այն սարսափները, գերաշխարհային.

Որ մարմնի վրա

Մտքի թանձրաթույն մելանն է գրում

Այդ նյութը մարդու ու աստվածային

Մտքի սանդղների վրա քրքրում

.....
Լրկնում շղթան

Նյութն են քրքրում:[15:121]

Խոսքը սկսվում է մարդկային տանջանքներից և աստիճանաբար հասցվում համաշխարհային նյութի քրքրման կետին:

Ինչպես բնորոշ է խեղճի լիստփայական երկին, ինչպիսին «Ընդոս պատանությունն» է, այստեղ ևս իրեն բնորոշ բնականություններ ու ոճով Դավոյանը կատարում է իմաստային ընդհանրացումներ. որոնք հաճախ իրենց չորությամբ ասես հակասության մեջ են մտնում քնարական հյութեղ տնքստի հետ..

Դեղեցկությունը նշաններ չունի

Միակ նշանը հենց ինքն է, որ կա

կամ

իմենք, հավատանք, որ մի հարվածով

Չի ոչնչանում կյանքը հիմնովին: [16;132]

Ռեազմիկ Դավոյանի պոեզիայում հաճախ առանձին բառ-երևույթներ ընկալվում են որպես լիդգրկուն հասկացություններ, որպես բազմիմաստ սիմվոլներ: Նման բառ-երևույթներից են «լույսը», «խավարը», «մույթը», «արցունքը», «անկումը», «անդունդը», «թախիծը» և այլն:

Հանելուկ է հավերժական

կամ առեղծված անթերի

Մարդը խավար մի զանգված է,

բայց նման է կանթերի

Տրորվում է իր մույթի մեջ

սակայն լույս է ճառագում.

Խռանում է մույթն անընդհատ

լույսը-ավադ բարակում: [17;161]

Մեջքերված տողերում կարելի է նկատել բանաստեղծի նուրբ բառագագացությունը «խավարի» ու «մյթի» գործածության օրինակով: Նշված բառերը այլևս միանշանակ համանիշներ չեն խիստ մոտ լինելով հանդերձ՝ հեղինակային մտքի դիպուկ ու թեթև շարժումներով ձեռք են բերում լրացուցիչ երանգներ. «մույթը» բնական նյութեղեն շոշափելի տարածքի է նման. նյութական մնացյալ աշխարհին հավասար՝ առանց բացասական շեշտով:

Մեկ այլ մեջքերում բառ-խորհրդանիշներով.

Տիեզերքի բոլոր անկյուններում

կա մի առգունք

Եվ անպայման անդունդների

վրա կախված: [18;241]

Արտարյուստ իրարից անչափ հեռու են «արցունքն» ու «անդունդը». բայց նրանց միջև գոյություն ունի ներքին բովանդակային կապ: Սա այն դեպքն է, երբ ստեղծագործական հաստատվությունը կոմպենսացվում է գեղարվեստական նոր արդյունքով:

Ռ. Դավոյանը ինքնատիպ բանարվեստ ունեցող հեղինակ է, քնարական տեքստեր հորինող տարրերով, որ դեպքից դեպք դիմում է նաև նորարարություն ապահովող արտահայտամիջոցների: Նրա բանաստեղծությունները առավել աչքի են ընկնում հետաքրքիր ու տալավորիչ ռիթմիկայով ու նրաժշտականությամբ, դասական տաղաչափական ձևերի լայն կիրառությամբ, որտեղ ժանկաշնչական ոտանավորը հանգային իր կառուցով ամենագործածականն է: Ռ. Դավոյանի նախասիրած արտահայտամիջոցներն են փոխաբերությունն ու համեմատությունը, որոնք կապես վճռում են նրա բան արվեստի տիպն ու որակը:

Գրականություն

1. Ռեազմիկ Դավոյան, ՌՆՍԻԻ երկեր, «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան 1987:
2. Ռեազմիկ Դավոյան, «Պոեմներ», «Սովետական գրող» հրատարակչություն, Երևան 1980:
3. Էդ.Ջրբաշյան, «Գրականության տեսություն», Երևանի համալսարանի հրատարակչություն 1980:
4. Էդ.Ջրբաշյան, Հ. Մախչանյան «Գրականագիտական բառարան», «Լույս» հրատարակչություն, Երևան 1980:

«Մերոզ Մաշտոց» համալսարանի հայոց լեզվի, գրականության և լրագրության ամբիոն